

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՄԱԿԲԱՅՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ա. Ն. ՔՅՈՒՐՔՉՅԱՆ

Րեզիստանտական տերմինը հայ քերականության ուղատմության մեջ առաջին անգամ հանդիպել ենք Բաղդասար Դպիրի¹ մոտ, սակայն, ինչպես կտեսնենք ստորև, ըստ բովանդակության ընդհանրական մակրայնները նույնական են եղել այն մակրայների հետ, որոնք քերականների մոտ հանդես են եկել «ժողովոյն» (Խրակադի), «ժողովական» (Գալանոս, Կոստանդնուպոլսեցի, Սկրոդեր, Սերաստացի և այլն), «համանմանական» (Ջուդայեցի) անուններով։ Բոլոր դեպքերում էլ նկատի է առնվել մակրայների հավաքական բառիմաստը։

Երբ մենք առանձնացնում ենք ընդհանրական մակրայների մի առանձին տեսակ (տե՛ս մեր «Հայերենի մակրայները» դիսերտացիոն անտիպ աշխատությունը՝ պաշտպանված 1956 թվականին), նկատի ունենք այն մակրայները, որոնք ունեն ընդհանուր իմաստ, բերականական մի բանի իմաստներ միաժամանակ արտահայտելու ունակություն։ Ընդհանրական են կոչվում մակրայնները ոչ թե ըստ հավաքական բառիմաստի, այլ բերականական ընդհանուր իմաստի հիման վրա։

Այդ չի նշանակում, սակայն, որ դրարարի քերականները չեն գիտակցել մակրայների բաղմիմաստությունը։ Հենց Բաղդասար Դպիրը վերոհիշյալ աշխատության 164-րդ էջում գրում է. «Պատական մակրայս յառաջ, երբեմն զժամանակ նշանակէ, երբեմն զտեղիի ժամանակ, յառաջ խորհեաց, ապա խօսեաց։ Իսկ տեղի, յառաջ կացէք...»։ Նույն այդ մասին է վկայում Գ. Ավետիքյանը, երբ գրում է. «...Նոյն մէկ մակրայը զանազան տեսակի մէջը յիշեցինք, զերէ (որովհետեւ—Ա. Ք.) նշանակութեան կէօրէ (համեմատ—Ա. Ք.) տեսակն ալ կը փոխվի. զր. յաւելւ—ը երբոր նշանակէ՝ շատ, կըլլայ քանակական. երբ նշանակէ՝ միշտ, ժամանակական. կիմացվի ես ավելի քան, կըլլայ ընտրական»²։

Գրարարի քերականության ուղատմության մեջ մակրայների բաղմիմաստության մասին խոսել է նաև դոցենտ Ա. Աբրահամյանը։ Նա որպէս այդպիսիք նշում է անդ, անդրէն, անդէն, աստէն, յանախ, ստէպ, ստէպ ստէպ մակրայները, որոնցից առաջինը արտահայտում է տեղի և ժամանակի, անդրէն, անդէն, աստէն մակրայները՝ տեղի, ժամանակի, ձևի և չափի, իսկ մյուսները՝ ժամանակի, չափի և ձևի իմաստներ, չնայած ըստ իմաստի և կիրառու-

¹ Բաղդասար Դպիր, Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիրքիմաց, Կ. Պոլիս, 1736, էջ 154։

² Գ. Ավետիքյան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 128—129։

թյան գերակշռության առաջին չորսը գաստում են տեղի, իսկ վերջինները՝ չափի մակրայների շարքը¹։

Աշխարհարարի քերականության պատմության մեջ մի շարք մակրայներ ընդհանրական անունով առաջին անգամ հանդես են գալիս պրոֆ. Ղարիբյանի մոտ²։ Նա քերականական իմաստից ելնելով, թեև ծանոթության կարգով, ընդհանրական է համարում վերջ ի վերջո, կրկին, նորից, հաճախ և նման մակրայները, որոնցից առաջինին որպես հիմնական վերագրվում է ժամանակի, իսկ մյուսներին՝ ձևի իմաստ³։

Ինչպես տեսնում ենք, հեղինակային մոտեցմամբ հաճախ մակրային վերագրվում է մերթ չափի (դոց. Ա. Արրահամյան), մերթ ձևի (պրոֆ. Ա. Ղարիբյան) իմաստներ. հենց այդ էլ խոսում է հիշյալ մակրայի ընդհանուր իմաստի մասին։

Վերջապես այդ հարցին անդրադարձել է Ս. Արրահամյանը իր «Ժամանակակից հայերենի շիբևոլոգ խոսքի մասերը» աշխատության համապատասխան բաժնում (Երևան, 1959)։

Այժմ քննենք ընդհանրական մակրայները Բ. Դպիրի մոտ։

Դպիրի մոտ³ ընդհանրական անվան տակ տեղ գտած հավաքական իմաստի մակրայներից (միանգամայն, ընդհանրապես, միահալոյն, միահամուռ, համանգամայն, առհասարակ) պատահաբար առաջինը միայն զրարարում բաղմ-իմաստ է, ըստ որում այն հանդես է գալիս մերթ ձևի, մերթ ժամանակի իմաստով. ընդհանրապես⁴ մակրայով օրինակի առհասարակ չենք հանդիպել, իսկ բոլոր մյուսները ունեն միայն ձևի իմաստ. այլ բան է, որ այս կամ այն մակրայը (ինչպես՝ առհասարակ) հետադարձում ձևեր բերած լինի իմաստային նոտերանդ՝ ժամանակի իմաստ. այսպես՝ միանգամայն մակրայը օգտագործվել է ձևի իմաստով՝ «Յանկարծ յեղակարծումն տարակարծի՝ քառասուն հազար զօրսն Հայոց միանգամայն⁵ կոտորէին» (Բուդ., 3, Է, էջ 19), «Իսկ սորա միանգամայն արբին դհուր Հոգւոյն ուրախութեան» (Աղաթ., էջ 252, այլև 154) և այլն. ժամանակի իմաստով՝ «...եւ հարեալ սատակէր զերկոսեան ղեղարսն միանգամայն ի բազմականին անդ» (Բուդ., 3, ԺԺ, էջ 48), «Հայկայ, որ եղև հակառակ Բելայ, միանգամայն և կենախուզ» (Խոր., 1, ն, էջ 20—21, այլև՝ էջ 50, 144, 186, ԲԱՊ, էջ 295 և այլն), չափի իմաստով՝ սրպես «մի անգամ». «...Զոր աւելորդ համարիմ երկրորդել զմիանգամայն աւագեալսն» (ԲԱՊ, էջ 87)։

Արեւելահայերենում կան հատուկներ օրինակներ (միայն նալրանդյանի և Մուրացանի մոտ), երբ միանգամայն մակրայը կիրառված է ժամանակի իմաստով՝ «...Մանավանդ արեւելյան միանգամայն և նահապետական հյուրասիրութենից շարժված...» (Մենկժ, էջ 16), «Այդ պատճառով նրանցից շա-

1 Ա. Արրահամյան, Դրարարի ձևնարկ, Երևան, 1952, էջ 307—310, այլև 1958, էջ 290—294։

2 Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասագիրք, Երևան, 1954, էջ 201, տե՛ս 5-րդ կետ, ծան. 1, այլև՝ էջ 300։

3 Բ. Դպիր, Պարզաբանություն քերականության կարճատև և դիրքի մաս, էջ 154։

4 Առձևոն բառարանում ընդհանրականապես մակրայի դիմաց գտնում ենք՝ տե՛ս ընդհանրապես (էջ 308), մինչդեռ այդպիսի մակրայ չկա բառարանում, իսկ ՆԲՀ (Վենետիկ, 1836) բառարանում այդ ակնարկն էլ չկա։

5 Այս և հետագա բոլոր ընդգծումներն իմն են—Ա. Ք.

տերը կրում էին միանգամայն մի քանի հատ տեղեր» (Մուր., Գ.—Մ.—, էջ 331): Հետևյալ օրինակներում ընդգծված մակրայնը ստացել է ձևի և շարժի ընդհանրական խմաստ՝ ամբողջական, բոլորովին մակրայների իմաստային երանգներով. այսպես՝ «...նվազի մեջ տեսնում էր մի բան, որը միանգամայն գրավել էր նրան» (Ն.—Դ.—, էջ 58): «Ազատ էինք միանգամայն ու խաղում էինք» (ՀԹ, էջ 408): «Միանգամայն անբավարար է կատարվել բնականաբան շինարարությունը» (ՍՀ, 15—3—54, Ն՝ 63) և այլն:

Արևմտահայերենում այս մակրայնը հանդես է գալիս միայն ժամանակի իմաստով. այսպես՝ «...Փոթացի իմ խոնարհ հարգանքներս ձեզի մատուցանել և միանգամայն հայտնել, թե ձեր դատերն ինձի հանձնեք» (ՀՊՄՄ, էջ 118, այլև՝ 104): «Խորհրդավոր միանգամայն արգահատելի էր այդ վաղեմի կեկա՝ վիճակը» (ԵՆ, էջ 16, այլև՝ 22): «Ասիկա իր ցավը և սիրտինքը եղավ միանգամայն» (ԶՆ, էջ 36) և այլն:

Իներեն օրինակներ առհասարակ մակրայի կիրառության. «...Ջրհեղեղաւ մարդիկ և անասունն առհասարակ սատակիցին» (Եղնիկ, 2, ժԶ, էջ 114): «...Եւ փախեան առ հաւարակ... և ի լսել զձայն գուժին զսղային առ հաւարակ» (ՎԲՊՏ, էջ 164): Այս մակրայնը հանդիպում է նաև (ի) հաւարակ ձևով. «Եւ իբրեւ ժողովեալք էին ի միահամուռ հաւարակ միաբան ամենայն եպիսկոպոսք...» (Բուդ., 4, Թ, էջ 101—102): Միջին հայերենում. «Առհասարակ արժանացոյ Զաղղըս հայոց քրիստոնէի» (ՅԲԲ, էջ 116): Գրական հայերենի երկու հատվածներում այս մակրայնը ստացել է ժամանակի իմաստային երանգ՝ «սովորաբար, ընդհանրապես» մակրայների իմաստով. պարզ է, որ վերջիններն իրենց հերթին ընդհանրական են ձևի և ժամանակի ընդհանուր երանգներով. այսպես՝ «...Ժողովրդական լեզվով փոխանակված հին բառերը առ հասարակ աշխատեցանք հեռի սլահել մեր ցուցակից» (ՄՆԵԼԺ, էջ 340, ալև՝ 171, Ն.—Դ.—, էջ 66, Մուր., Գ.—Մ.—, էջ 124, ՇԵԼԺ, էջ 220, ՀԹ, էջ 410 և այլն): «Բր շարժմանց մեջ ունեւր ըմբշական այլ, արհամարհոտ հովը, որ իր դասակարգի մարդկանց վրա կը նշմարվի առ հաւարակ» (ԵՆ, էջ 3): «Գա սովորաբար արվել է այն բանի համար...» (ՍՀ, 5—3—54): «...Ուսկից համբը կանցներ սովորաբար» (ԵՆ, էջ 77): Սովորաբար մակրայնը ընդհանուր իմաստ ունի նաև գրաբարում՝ «Բայց սովորաբար զայս ասէին» (ԿԳՊ, էջ 258):

Հետաքրքրական է, որ տրամաբանական շեշտը, գուցե և դասավորությունը, դեր ունեն ընդգծված մակրայնը ընդհանրական՝ ձևի և ժամանակի, այլև միայն ձևի իմաստով արժեքավորելու հարցում. այսպես՝ վերջին օրինակում՝ «սովորաբար զայս ասէին» կամ՝ «զայս ասէին սովորաբար» իմա՝ սովորության համաձայն, ըստ սովորության, իսկ «սովորաբար զայս ասէին» կամ՝ «զայս ասէին սովորաբար»՝ արդեն հանդես է գալիս ընդհանուր իմաստով: Նույնն էլ պետք է ասել ընդհանրապես մակրայի վերաբերյալ. այսպես՝ «Համբը... ընդհանրապես (ձևի և ժամանակի ընդհանուր իմաստով) մեքենաբար կառներ գրամբ աղջկան ձեռքեն...» (ԵՆ, էջ 79): «...Արժանավորության մասին ընդհանրապես (միայն ձևի իմաստ ունի) ենք միայն խոսել» (ՄՆԵԼԺ, էջ 170): Ակնհերե է ընդգծված մակրայների իմաստային ընդհանրությունը:

Ընդհանրական համարվող մյուս մակրայները՝ համանգամայն, միահաղոյն, միահամուռ, ունեն միայն ձևի իմաստ. առաջինը հանդիպում է հատկապես Թ. Արծրունու մոտ՝ «...Այլ համանգամայն ամենայն բարիքս Որմզդի է եւ լաւք» (ԹԱՊ, էջ 26, այլև՝ 189, 200 և այլն): Ընդհանուր է նաև միջին հա-

լերենում՝ «Անհնրեան համանգամայն Վաղեն Ն Երթան ի հէրխան» (ՄՀԱԳ, էջ 225)։ Միանադուն մակրայր ունի նաև միանադուն իսկ, համանադուն տարբերակները՝ «...ն անունդ առնել միանադուն գտոհման Որշտունեաց և գտոհմն Արծրունեաց» (Բուդ., 3, ԺԸ, էջ 47)։ «...ն միանադուն իսկ Երարծ դմեղս աշխարհի» (Ազաթ., էջ 349), «Զի թէ համանադուն ածէր պատիժսն... Ոսկ. նս.» (ՆԲՀ, հատ., 2, էջ 16)։ Միանամուն՝ «...Զամենայն միանամուն ածէ գերի սաստիկ յԱրտաշատ» (Խոր., 2, ԾԲ, էջ 182)։ «Նրանք բոլորն էլ միանամուն եկել են իրենց քաղաքացիական պարտքը կատարելու» (ՄՀ, 15—3—54, № 63)։ Արևելյան հայերենում արտահայտվում է նաև միանամուն կերպով, միանամունությունը ձևերով՝ «Սովետական Հասարակության աշխատավորները միանամուն կերպով իրենց ձայնը տվին...» (նտ.), «...Միանամունությամբ առաջադրեցին...» (նտ., 11—3—54, № 59) և այլն։

Ընդհանրական մակրայների մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ կան այնպիսիները, որոնք մակրայի այս կամ այն տեսակին հարում են բոլոր կիրառության, կան նաև այնպիսիները, որոնց պատկանելիությունը դժվար է որոշել. դրանք ձևի, ժամանակի, չափի և այլ իմաստներն արտահայտում են միաժամանակ։

Հայերենի ընդհանրական մակրայները կտրելի է խմբավորել հետևյալ տեսակների մեջ.

1. Տեղի եվ ժամանակի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՄԱՍՏԻ ՄԱԿՐԱՅՆԵՐ

Դրանցից են աստ, անդ, ասա ուրեմն, ի հպոյ, անդ ուրեմն, վերուստ, չետոյ, յետուստ, յառաջ, յառաջագոյն, վերագոյն և այլ մակրայները գրարարում, բոլոր ընդհանրության նաև հայերենի մյուս հատվածներում։

Սրանք տեղի հիմնական իմաստից բացի կիրառվում են նաև ժամանակի իմաստով¹. այսպես՝ «Աստ ուշիմ և խոհեմ սկայն... աճապարեալ հաւարէ պորդիս...» (Խոր., 1, ԺԱ, էջ 35)։ «Աստ ի մէջ անցնալ քոյր նոցա Աստղիկ...» (նտ., 1, Զ, էջ 24)։ «...Աստ ուրեմն յետ սրբոյն Տրդատալ բարձեալ ասին ի միմեանց պատերազմալ» (նտ., 1, ԺԲ, էջ 38)։ «...Զոր աստ ուրեմն յետոյ սմանք բարձին» (նտ., 1, Ե, էջ 21) և այլն։

Հայերենի մյուս հատվածներում աստ մակրայը փոխարինվում է այստեղ գերանվամբ. դա ես գործ է ածվում ժամանակի իմաստով. այսպես՝ Այստեղ նա մի պահ կանգ առաւ. այստեղ շիմացա ինչ անել և այլն (իմա՝ այս պահին, այս ժամանակ)։ Նույնը կա նաև բարբառներում. Առտիալի բարբառում՝ «—Ատեղ ուժ ես ինքս տաքացամ» (ԱՃՀԲ, էջ 85), Ազուլիսի բարբառում՝ «Աստեղ ըսկսելա ասախկատ մարդը պատմել իրան գիւհի ինց կահաժը» (Սատ. ԿՕԸ, էջ 31) և այլն։ Անդ՝ Քանդի անդ մոլեղնեալ այր իւրաքանչիւր...» (Խոր., 1, Ժ, էջ 33), «Բսկ Պապ որդին Արշակայ ոչ գիպեցաւ անդ ի Հայոց աշխարհին» (Բուդ., 4, ԾԵ, էջ 174—175)։ «Անդ ի վերայ հասանէր նոցա Մուշեղ» (Ղևոնդ, էջ 140)։ «Անդ ուրեմն շարժէր սիրտ նախարարի ուրումն ցասմամբ» (նտ., էջ 139)։ Այսպիսի օրինակներ կան նաև միջին հայերենում՝ «...Բէ ոչ ասացի անդ, թէ աստ մի դար» (ՄՀԱԳ, էջ 332)։ «Բէ փոշիմնելն անդ է բարի, Որ քո լալուդ լսող լինի» (ՅԲԲ., էջ 29) և այլն։

¹ Օրինակները կրկին միայն ժամանակի իմաստով։

Գրարարում ժամանակի իմաստով են հանդիպում նաև վերուստ, յետուստ մակրայնները. այսպես. «...նմանագոյնս արդեօք երբայեցողն պատմագրաց՝ ի վերուստ ի քեզ իջուցանիցեմ անսխալ» (Խոր., 1, Գ, էջ 12):

Այստեղ ի վերուստ նշանակում է՝ սկզբից, սկզբնական շրջանից. «Զի ի սկզբանէն յորժամ առնէր աստուած զարարածս, յետուստ արար զմարգն» (Բուդ., 4, Ե, էջ 83): «Զի գոնեայ ապա յետոյ յետուստ իշխելովն ծանիցուք» (Նտ., 4, Ե, էջ 85):

Յետոյ, յառաջ, յառաջագոյն մակրայնները գրարարում ավելի շատ են հանդիպում ժամանակի իմաստով. իհարկե կան օրինակներ, երբ դրանք օգտագործված են նաև տեղի իմաստով. Օրինակ՝ «...Յաղագս որ ինչ խորհեցան ի յետոյ իշխանքն Հայոց» (Բուդ., 5, ԼԳ, էջ 240): «...Յետոյ... յանուն նորա անուանեցաւ Վանանդ» (Խոր., 2, Զ, էջ 109):

«...Քանզի յառաջ անուանէր Վաղեգեսոս ի յունաց լեզուն» (Նտ., 2, ԿԳ, էջ 197): «Յառաջ Ուսոյթ էր անուն նորա» (ՎԲՊՏ, էջ 171): «...Զի ոչ քննեցաւ նա յառաջագոյն ի սմանէ» (Խոր., 2, ԼԳ, էջ 154): «Զի որպէս ասացաքն յառաջագոյն» (Ղևոնդ, էջ 57) և այլն:

Գրական հայերենի երկու հատվածներում առաջ բառը եթե երբեմն պատկերում է տեղի իմաստը (հատկապես բայական հարադրություններում), ապա հետո-ն որպես մակրայն կիրառվելիս միշտ ունի ժամանակի իմաստ՝ առաջ դալ, առաջ գնալ, հետո առել, հետո պատմել և այլն:

Միջին հայերենում ժամանակի իմաստով է հանդիպում ի վայր տեղի մակրայնը. «Եւ յառաջն ղցաւուն անունն և յետե ղպատճառն և զնշանն. և այլ ի վայր ստածումն» (ԱԲԺ, էջ 6). իմա՝ հուսկ հետո:

Պրոֆ. Աճառյանը Մարագոյի բարբառի քննության մեջ հետևյալ մակրայններին վերագրում է տեղի և ժամանակի ընդհանուր իմաստ՝ ղէսանէնէնց ղէսանէտէնց՝ ղէսանէրէլա ղէսընցա ղէսանէսթի՝ «այստեղից այնտեղ, այսուհետև», ինդէնէնց ինդէնէտէնց ինդէնընցա՝ «այստեղից այնտեղ, այնուհետև», աէտանէնց տէտանէտէնց տէտանընցա՝ աէտանէսթի՝ «այստեղից այստեղ, այնուհետև» (ԱՃՔՄԲ, էջ 301, 303, 306):

2. ՏԵՂԻ ԵՎ ՉԵՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՄԱՍՏԻ ՄԱԿՐԱՅՆԵՐ

Նման մակրայններ հանդիպում են մեծ մասամբ գրական հայերենի երկու հատվածներում, այլև բարբառներում. ճիշտ է, կան մակրայններ, որոնք ընդհանուր են նաև գրարարին, սակայն այժմ հանդես են գալիս իմաստափոխված ձևով:

Այսպես՝ արտափուտ և (ի) ներփուտ մակրայնները գրարարի հաճմատութեամբ ձեռք են բերել նաև ձևի իմաստային երանդ. օրինակ՝ «...Բեշիրը ի ներփուտ բարեկամ է արքային» (Մուր., Գ.—Մ.—, էջ 323), «Միքայելը ներփուտ վախեցավ» (Շեկժ, էջ 188), «...Ի ներփուտ ուրախանալով տիրող մութին վրա...» (Են, էջ 35), «Արտափուտ ամեն բան ասես բարեհաջող է» (ՍՀ, 22—3—54, N 70): «Արտափուտ բարեկիրթ ձեեր ունի» (Զն, էջ 242) և այլն:

Ընդգծված մակրայնները ձևի իմաստային երանդով հարում են ձևի մակրայններին: Այսպես են նաև նրանց բարբառային տարբերակները:

Նույնը պետք է ասել նաև տեղի մակրայններ համարվող մի շարք կրկնա-վորների և նրանց բարրառային ձևերի մասին՝ ղեմ առ ղեմ||ղեմ ի ղեմ||ղեմա-ղեմ||ղեմ ղեմի||ղեմ ղիմաց, ղեմհանդիման, փոխփոխ||փոխփոխի, կիցակից, կողմ կողմի, ետ ետ||ետուետ||ետ ու ետ և այլն։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիշյալ մակրայնները, հակառակ իրենց կազմող բաղադրիչների իմաստին, որպես ամբողջություն ավելի շատ իմաստավորվում են ըստ ինչ-պես և ոչ թե որտե՞ղ հարցի։ Այսպես՝ Գնում էր կիցակից։ «...կանգնած են ղեմ ու ղեմ» (Շեկո, էջ 225)։ «...Հետ ու ետ քալելով... դուրս գնաց» (նտ., էջ 46)։ «Դեմ ղեմի նստեր էինք էյուրասիական սրճարանին մեջ» (Զն, էջ 228)։ «Ու երկու բարեկամները կերթային փոխ-փոխ» (են, էջ 126)։ Նաև՝ կողմ-կողմի քայլել, ղեմհանդիման կանգնել և այլն։

Այսպիսի մակրայններ կան նաև բարրառներում՝ երևանի բարրառում՝ ղիմաց ղիմաց, ղեմաղեմ (վերջինը նաև Թրիլիսիի ու Ղարաբաղի բարրառներում), Պոլսի բարրառում՝ ղեմ ղիմաց||ղիմաց ղիմաց և այլն։ Երևանց՝ Պոլիս, Վան, Թրիլիսի, Երևանաց՝ երևան, Երևանաց՝ Ղարաբաղ, երևան՝ «Երևանաց հիւի, տակահան ծիլի», «Երևանց սէր կը ցուցնէ, Լտեէս հօր կը փորէ» (ԱՃՀԳԲ, էջ 304)։ Երևանց||Երևանց՝ Պր., Երևանց||Երևանց՝ Ննհ.՝ «Երևանց փարեկամս կըլայ» Пат. Мат., էջ 66), Կարին՝ Իրիսանց, Ն. Զուլա՝ յիւսախան, Համշեն՝ Երևան, Երևանց և այլն։ Ձևի և տեղի զուգահեռ իմաստներով են կիրառվում նաև այլ մակրայններ՝ տկմունց՝ հլ., տակևանց՝ եր. (—ցածրից, ներքևից), տակահան՝ Ղրբ., Տփ., տակահան՝ երև., Շմ., տակահանց՝ երևան. վերջինները տեղի իմաստին զուգահեռ ունեն նաև «գաղտունկ, խորամանկորեն, ծուռ ծուռ» իմաստները, այսպես՝ երևանի բարրառում՝ «Տակահանց է նայում» (ԱՃՀԳԲ, էջ 1010)։ Տականց մակրայն 1) երև., հլ. բարրառներում ունի «ներքևից, մաի վրայից» տեղի իմաստը՝ «Տականց շապիկ է հագել», 2) Ննհ. բարրառում՝ «մինչև հատակը, ցմբուր» «Բաժակը տականց պարպեց», իսկ երևանի բարրառում՝ «ծածուկ, խորամանկորեն» ձևի իմաստները։

3. Տեղի, ԺԱՄԱՆԱԿԻ, ՁԵՂԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՄԱՍՏԻ ՄԱԿՐԱՅՆԵՐ

Որպես առանձին տեսակ կարելի է առանձնացնել տեղնուտեղը մակրայն իր բոլոր տարբերակներով, որը ունի տեղի, ձևի և ժամանակի բնդհանրական իմաստ, ըստ որում շատ հաճախ թույլ է տեղի իմաստը. այսպես՝ տեղնուտեղը փոփել, մեռնել, քարանալ, կոտորվել և այլն։ Այս մակրայնի իմաստը երբեմն կոնկրետանում է՝ նախադասության մտքից և ստորոգյալի իմաստից ելնելով. այսպես՝ «ժողովրդի մի մասը դուրս փախավ եկեղեցուց, մի մասը տեղն ու տեղը (իմա՝ այնտեղ՝ եկեղեցու ներսում), սրի ճարակ դարձավ» (Մուր., Գ.—Մ.—, էջ 269)։ «...Առայժմ անհրաժեշտ էր տեղն ու տեղը (որտե՞ղ՝ տեղի մակրայն է) մնալը» (Շեկո, էջ 65) և այլն։

Տեղնուտեղը մակրայն բարրառներում ունի նաև ձևի «մանրամասն կերպով» իմաստը. այսպես՝ ղեղնիղեղոփ||ղեղնուղեղը՝ Համշեն (ԱՃՀԳԲ, էջ 170), ղեղնիղեղոփ||ղեղնոգղեղոփ||ղեղնրղեղը՝ Պոլիս (ԱՃՔՊԲ, էջ 176). արևմտյան

¹ Բարրառային օրինակները բերված են բարբառագիտական համապատասխան աշխատություններից։

գրական հայերենում հանդիպող տեղնիտեղոք մակրայն հալանական է, որ ունի բարբառային բնույթ: Այսպես՝ «...Տեղնիտեղոք պիտի ընես...» (ԵՆ, էջ 178—179), տեղրէտեղ||տեղնրստեղ||տեղրստեղ՝ վան, տեղրստեղ՝ Ղարաբաղ՝ «տեղնուտեղը, նույնհետայն, հենց նույն ժամանակ» իմաստներով:

Այս մակրային համապատասխան գրաբարում տեղի, ձևի և ժամանակի ընդհանուր իմաստ ունի անդէն մակրայն. այս մակրայն այն ժամանակ իմաստով ժամանակի մակրայն է, իսկ իսկույն, անմիջապես իմաստով ունի ժամանակի և ձևի ընդհանուր իմաստ. այսպես. «...Զի թող անդէն ետ ընդ ետ լինէր նմա որդի» (Եղնիկ, 2, 2, 92): «...Անդէն վաղվաղակի թողուն՝ զհայրն իւրեանց նաւան հանդերձ» (Աղաթ, էջ 222): «...Անէծ զԱրշակաւանն, և անդէն սատակեցան բնակիչք նորա շարամահ» (ԿԳՊ, էջ 26):

Տեղի, ժամանակի և ձևի ընդհանուր իմաստ ունեն նաև աստէն, աստէն իսկ մակրայնները. օրինակներ ժամանակի և ձևի իմաստով. այսպես՝ «Ապա եթէ ոչ կամիցիք լսել քարոզութեան յանին կենաց՝ աստէն հարեալ վրիժուքն շարաշար հարուածովք զձեզ սատակեսցէ...» (Աղաթ, էջ 125): «Այլ զի ասացեր, եթէ զքեզ յանշէջ հուրն արկանէ՝ և զքեզ աստէն իսկ այրեցից շիջանուտ հրով» (Նտ., էջ 69): «...Որ աստէն տօնիչ և գգուիչ էր զաւակաց նորա» (ՎԲՊՏ, էջ 191—192) և այլն:

Այդպիսի մակրայններ են գրաբարում նաև հուպ, ընդ հուպ, ընդհուպ, հուպ առ հուպ մակրայնները՝ «շատ շուտով, մոտ կերպով» իմաստներով, այլև մօտ ընդ մօտ, մօտ ի մօտոյ, մօտ առ մօտ, մօտ ի մօտ, մերձ ընդ մերձ մակրայնները՝ «իրար մօտ, մոտերս, քիչ ժամանակից» իմաստներով:

4. ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿԻ, ՉԵՎԻ ԵՎ ՉԱՓԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՄԱՍՏԻ ՄԱԿՐԱՅՆԵՐ

Կան մակրայններ, որոնք ունեն տեղի, այլև ժամանակի, ձևի և չափի ընդհանուր իմաստ. դրանցից է անդրէն մակրայն. այս մակրայն ժամանակի, չափի և ձևի երանգներ ունի՝ նորից, վերստին իմաստներով: Այսպես՝ «...Աշխատութեամբ և քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչև լիցի քո զարձ անդրէն յերկիր՝ ուստի առար» (Եղնիկ, 1, ԺԷ, էջ 51): «...Այնու զի յերկրէ կերակրին և ի նմա բնակեն, և անդրէն ի նոյն շրջեալ հեղանան» (Նտ., 1, ԺԵ, էջ 46): «...Խօսէր ընդ նմա ողորով, զի թագաւորեցուցէ զնա անդրէն յիւր աշխարհն արձակելով» (Բուդ., 3, ԻԱ, էջ 57): «Բայց ինքն ՚Դեղամ դառնայ անդրէն ի դաշտ անդր» (Խոր., 1, ԺԲ, էջ 41) և այլն:

5. ԺԱՄԱՆԱԿԻ, ՉԱՓԻ ԵՎ ՉԵՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՄԱՍՏԻ ՄԱԿՐԱՅՆԵՐ

Այդպիսի մակրայններից են՝ դարձյալ, վերստին, կրկին, կրկին անգամ, նորից||նորեն, էլի և այլն: Հիշյալ մակրայնները իրենց ընդհանուր իմաստի շնորհիվ կարող են ազատորեն փոխարինել միմյանց: Այսպես՝ «...Ասէ՛ թէ որ ոչ ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ» (Եղնիկ, 4, ԺԵ, էջ 204): «Սոցա բերեալ կրկին անգամ թաղ...» (ԽԱՊ, էջ 322): «Դարձեալ կրկին աղաչեմ» (Նտ., էջ 361): «Կյանքով շընչեցէ՛ք, ապրեցէ՛ք նորից...» (ՀԲ, էջ 183): «Նամակը... կարդաց և նորեն ընկալ մտատանջության մեջ» (ՇԵԼԺ, էջ 65): Էլի եմ կարողում այդ դիրքը և այլն:

Եւրոված օրինակներում բնագծոված մակրայններն ռնեն ժամանակի, չափի և ձևի իմաստային նույնպիսի երանգներ, ուստի և կարող են փոխարինել միմյանց: Հիշյալ մակրայնների դիմաց նույն իմաստներն ենք գտնում նաև բառարաններում. այսպես՝ ԱԲ-ում՝ դարձեալ՝ նորանց, կրկին, կրկին, կրկին անգամ՝ երկու անգամ, մէյմալ, նորէն, վերստին՝ վերստին՝ նորանց, մէյմալ, ՄՀԲԲ-ում՝ նորից՝ նորեն՝ կրկին, էլի, դարձյալ, ԱՃՀԳԲ-ում՝ նորէն՝ Պլ.՝ նորի-կէն՝ ԶԹ., նորից՝ երև. ՝ նորմէկանց՝ նորմէկէլանց՝ Տփ. ՝ նորմնայ՝ Ղրբ.՝ դար-ձյալ, կրկին, վերստին և այլն:

Ընդհանրական նույն մակրայնները կան նաև բարբառներում: Գարձյալ ձևով հանդիպում է միայն Առտիալի բարբառում. «Գարձեալ գիտակցվի օր փոփօր քալցընա նատ բացա» (ԱՃՔԱռտԲ, էջ 215): Նույն իմաստով բարբառ-ներում կա էլի մակրայն՝ մի շարք ձևափոխություններով. էլի՝ Կարին, երևան, Տփ., ալա՝ Առտիալ՝ «Գի խնդրէ նումայ գաս գազրիլը ալա» (ԱՃՔԱռտԲ, էջ 225), էլա՝ Մարադա, ալու, ալու (Հայոյ)՝ Մեղրի (ԱՄԲ, էջ 238), էլի, էլինայ՝ Ղարարադ, էլմէլ՝ վան (ԱՃՔԱԲ, էջ 200), էլման՝ Ալշ., ել. (—կրկին. դարձյալ)՝ «էլման կ'երթայ, էլման կուգայ» (ԱՃՀԳԲ, էջ 329—330):

Բարբառները չունեն վերստին, կրկին մակրայններ, այդ իմաստով հան-դես են գալիս նորեն մակրայն՝ զանազան ձևափոխություններով, այլև՝ նրա թուրքերեն տարբերակները՝ գլնէլլըգաղանլլըգաղանից: Այսպես՝ նորէն՝ կլնէլլնոր-նորտէն՝ Ն. Նախիջևան. վերջինը որպես նորից նոր՝ «նոր-նորտէն հարսնիք արին» (Սատ. Մատ., էջ 50), նորէնլլգլնէլլնորէն՝ Պոլիս, նորէն՝ Կա-րին, նիւրի՝ Ազուլիս. «...Ամա նո ալ նիւրի սկսեալ ըռոհնիլ» (Սատ. ԿՕՈԴ, էջ 28), նորմնա՝ Ղարարադ, նորմէլ՝ Ն. Զուգա, նորմէլն՝ Արդվին՝ «նորմէլն էղնէ դարցա» (ԱՂ, ՀԲՄՆՂ, ՊՀԴԱ, հ. 11, էջ 49): Առտիալի բարբառում նույն իմաստով գտնում ենք ալվըլլալվլլալվլը մակրայններ: Այլու մակրայնը իր զանազան տարբերակներով գտնում ենք նաև միջին հայերենում՝ «դարձյալ» իմաստով՝ ալուրի ՝ ալլի ՝ ալվա ՝ ալվալ ՝ ալլու ՝ ալլուայր ՝ ալլուվայր՝ «...Ալլուի խնդալ» (ՅԲԲ, էջ 82): Եւր ժողովածու լեթոգ ալլու» (նտ., էջ 102): «...Ալլվի ծածկեցիր» (ՄՀԱԳ, էջ 237): «...Եւ պահ մն կենայ և ալվայ վաթի» (ԱԲԺ, էջ 232): «...Ծեծէ և մաղէ և յիրար խառնէ և ալվա ա՛ծ ի հաւան» (նտ., էջ 249): «Ապա թէ վախեա թէ ջերմն ալլուայր դարձ ալրնէ» (ՄՁՄ, էջ 106): «...Եւ յետ այնոր ալլուվայր գարեջուր և սրբնձպին խառնեալ ի հով ջուր...» (նտ., էջ 112) և այլն:

Գարձյալ, վերստին, նորից ժամանակի, ձևի և չափի ընդհանուր իմաստ ունեն բարբառներում մէկ էլլմին էլ մակրայնները՝ իրենց բոլոր տարբերակ-ներով. մէկէլ՝ Արդվին. «մէկէլ էղնէ աշից» (ԱՂ, ՀԲՄՆՂ, էջ 45) ՝ մէկէլի՝ «...մէկէլի էրվաց գէղը հէսվիմէն» (նտ.), Ուրմիայի բարբառում՝ մէլն էլ՝ «մէլն էլ յետ բղկաց» (նտ., էջ 145), մինալ՝ Կարճեան. «մինալ յէտ ա փամալ» (նտ., էջ 81), մին էլ՝ Ն. Զուգա (ԱՃՔԱԲ, էջ 314), մլմալ՝ Կարին (ՀՄԿԲ, էջ 93) և այլն:

Անկասկած բարբառային ձևեր են դրական հայերենի երկու հատվածնե-րում հանդիպող մէկ մրն ալլմին էլ մակրայնները: Այսպես՝ «...էլեր մրն ալ տեսնա՛մ քի ան միսրիններուն հետ կյորիշմիս կրլլաս կոր...» (ԵՆ, էջ 8): Արեւելյան հայերենում բազմաթիվ օրինակներ կան Հ. Թումանյանի մոտ. այս-պես՝ «մին էլ եկավ, դարձյալ շրկար...» (ՀԹ, էջ 88): «մին էլ որ գա ու սպառ-նա...» (նտ., էջ 118): «—Կենդանի՛ եմ, մին էլ արի՛» (նտ., էջ 256) և այլն:

Սակայն սին Լլ||մեկ Լլ մակրայնեբր, բացի ընդհանրական չափի, ձևի և ժամանակի իմաստից, ըստ կիրառության հանդես են գալիս մերթ ձևի, մերթ ժամանակի իմաստներով: Այդ ձևերին դուգահեռ հաճախ գործածվում է հանկարծ մակրայն՝ այսպես. «Քույրը մին Լլ ետ է նայում» իմա՝ հանկարծ (ՀԹ, էջ 108): «Մտիկ են ալի ծառայքը մեկ Լլ» (նտ., էջ 109): «Մին Լլ հանկարծ էն անտեր արջը դուրս եկավ և ինձ կալավ» (նտ., էջ 379): Նույնպիսի օրինակներ կան նաև բարբառներում. այսպես՝ Մարաղայի բարբառում՝ «ՄԼ-կեկ տոտամ բիրդան, թառապ, ինքամ թէօնդիւրան» (ԱՃՔՄԲ, էջ 333): Նրեանի բարբառում՝ «ՄԼկ Լլ տեսանք բիրդան զըրընգօց էկավ» (ԱՃՀԲ, էջ 50): Ժամանակի իմաստով քիչ է հանդիպում՝ «Մին Լլ Կարոն աղմուկով եկավ զուռնով-թըմբուկով» (ՀԹ, էջ 145) իմա՝ մի օր, մի օր էլ և այլն:

Մին Լլ մակրայն հանդես է գալիս նաև որպես շաղկապ՝ դարձյալ, նաև իմաստով, «— էն ա Սուքնանց Ղուկասը մեռավ, մին Լլ Պուճուրանց պառավը» (ՀԹ, էջ 350) և այլն:

Ժամանակի, չափի, այլև ձևի իմաստային երանգներ ունեն նաև այլ մակրայնեբր՝ հանախ, հանախակի, մշտակի՝ «Մշտակի դալիս գնում էր» (ՄՀԲԲ, հ. 3, էջ 350), մշտական (ՀԹ, էջ 233), ստեպ, ստեպ ստեպ¹, յաւտ (միայն գրաբարում), մեկ մեկ և այլն, ըստ որում, եթե առաջինները այդ իմաստները պարունակում են ընդհանուր ձևով, միաժամանակ, ապա վերջինի սահմանները որոշակի են. այդ մակրայն ձևի, ժամանակի կամ չափի իմաստներ է արտահայտում ըստ կիրառության. այսպես՝ մեկ մեկ մակրայն երբեմն երբեմն իմաստով. միջին հայերենում՝ «Ի մանկութեան խեղկատակին հիմիկ մէկ մէկ համար կու տամ» (ՅՐԲ., էջ 168). բարբառներում՝ Արդվին «...ՄԼկ մէկ մըշտուկը բերնիմէն հանէլով օրթուն խրատէլիս էր Համբօն» (ԱՂ, ՀԲՄՆՃ, էջ 47), Ադուլիս՝ մույն մույն (—երբեմն, ԱՃՔՄԲ, էջ 375), ն. Ջուդա՝ մի մին՝ «...Մի մին գէսն յեկ» (ԱՃՔՆՋԲ, էջ 317) և այլն, Ղարաբաղ՝ մին մին, վերջին երկու մի մին, մին մին, այլև մի մի ձևերով հանդիպում է նաև Հ. Թումանյանի մոտ՝ «Մի մին եկողի հետ դիր դարկի...» (ՀԹ., էջ 340): «Թաղավորն երբ որ լըսում է մին մին» (նտ., էջ 110): «Էլ ի՞նչ ասեմ, ողջը մի մի...» (նտ., էջ 131): Վերջին երկու օրինակներում ընդգծված բառերը ունեն ձևի իմաստ. նույնն է նաև հետևյալ օրինակում՝ «Պայծառ լույսերը հանգչում են մեկ մեկ» (ՎՏԲ, էջ 55): Ձևի իմաստը կա նաև բարբառներում. Արդվին՝ «...ՄԼ մէկ դէրէկան» (ԱՂ, ՀԲՄՆՃ, էջ 48), Մարաղա՝ «...ՄԼկ մէկ կասը» (ԱՃՔՄԲ, էջ 364) և այլն: Մեկ-մեկ-ը որպես մեկական՝ Մեկ մեկ բաժանիր, ունի չափի իմաստ: Վերոհիշյալ ընդհանուր՝ ժամանակի, ձևի և չափի իմաստներն ունեն նաև օր բառի Նախդրավոր, աննախդիր հոլովական կրկնությունները. այսպես՝ գրաբարում՝ օր բնդ օրն, օր Բան գօր, օր բստ օրէ, օրաուր. վերջին երկուսը նաև հայերենի մյուս հասկացածներում. միջին հայերենում նաև՝ օր յօրէլլօրէ օր և այլն, արնե-լա հայերենում՝ օրեգօր||օրիգօր՝ «...Տան մեջ առաջին տեղն էր բռնում օրիգ-օր մանկացող հիվանդի քիմրը» (Շեկժ, էջ 110) ||օր օրի վրա||օր օրին||օրն օրին՝ «Առաջ է զընում տըղեն օրն օրին...» (ՀԹ., էջ 121): «Անհրաժեշտ է օր-օրին

¹ Ստեպ, ստեպ ստեպ մակրայնների դիմաց ԱԲ-ում գտնում ենք շարունակ. շուտ-շուտ, ահողաղաւ, շուտով մակրայններ (էջ 734—735). այդ նույն իմաստն ունի նաև ստիպալ մակրայն. ստիպեմ բայը. որի արմատն է ստեպ, դարձյալ ունի շտապեցնել իմաստը, որը սակայն այժմ ենթարկվել է իմաստափոխության:

պայքար մղել առևտրի կուլտուրան բարձրացնելու համար» (ՍՀ, 12—3—54, № 60)։ Արևմտյան դրական հայերենում՝ *or orē||or or* (ՋՆ, էջ 6) *||or or* վերջինը չի բացառվում նաև արևելահայերենում. օրինակներ կան հատկապես Նալբանդյանի մոտ (ՄՆԵԼԺ, էջ 335 և այլն)։

Բարբառներում հս կան նման և այլ մակրայններ. այսպես *orē or||or or* *||or or* վրա՝ Պոլիս, *orēgor||or or*՝ Համշեն, *orē or*՝ Ն. Նախիջևան, *յorēgor*՝ Ն. Զուղա, *or qawor||or or* *orē*՝ Առիտալ, *Մուշ՝ or qor||or* *or qor*՝ «Աղբէր իշկեց օր քոջ փոք օր qor՝ or qor կուռի»։ «Իշկիմ քո մէղար օր պր qor կուրանձրնա» (ԱԾՀԲ, էջ 131), Մշո բարբառում կան նաև օրիկ օրիկ ձևը՝ «օրէ օր. հետզհետէ» իմաստներով՝ «Հիւանդս օրիկ օրիկ կը ծանրանայ» (ԱԾՀԳԲ, էջ 1138) և այլն։

Այս մակրայի բոլոր տարբերակները ժամանակի իմաստին զուգահեռ ունեն նաև ձևի՝ հետզհետե, կամաց կամաց և չափի՝ փչ փչ, փոքր առ փոքր, սակավ առ սակավ ընդհանրական իմաստ։ Այստեղից հետևում է, որ վերջինները հս հանդես են գալիս փոխադարձ ընդհանուր իմաստով։

6. ՉԱՓԻ ԵՎ ՉԵՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՄԱՍՏԻ ՄԱԿՐԱՅՆԵՐ

Չափի և ձևի ընդհանուր իմաստ ունեն չափի համարվող մի շարք մակրայններ՝ սակաւ սակաւ, առ սակաւ սակաւ, ըստ սակաւ սակաւ, սակաւիկ սակաւիկ, առ սակաւիկ սակաւիկ, ըստ փոքու փոքու, առ ի փոքր փոքր, առ փոքր փոքր մի, առ փոքր փոքր, փոքր փոքր և այլն։ Միջին հայերենում ընդհանուր են սակաւ սակաւ, փոքր փոքր մակրայնները. կան նաև նույնիմաստ փչ փչ, փչիկ փչիկ մակրայնները։ Քիչ փչ ձևը ընդհանուր է դրական հայերենի երկու հատվածներին, այլև բարբառներին՝ Պոլիս, Կարին, Համշեն, Առիտալ և այլն, փչիկ փչիկ՝ Արարկիր և այլն։ Արևելահայերենում կա փոքր առ փոքր մակրայնը։ Սրանք «հետզհետե, կամաց կամաց» իմաստներով ձևի մակրայններ են։

Հիշյալ մակրայնների վերաբերյալ նույնպիսի փաստեր են տալիս մեզ և ԱԲ-ը, և՛ ՄՀԲԲ-ը և՛ ԱԾՀԳԲ-ը։ Հետաքրքրական է նկատել, որ Առիտալի բարբառում փչենք նշանակում է՝ կամաց կամաց» (ՀԱ, 189, 105, տե՛ս ԱԾՔԱռտ, էջ 182)։ այս փաստը խոսում է դրանց իմաստային կապի մասին։

Չափի և ձևի ընդհանուր իմաստ ունեն նաև ժամ մի (—մի անգամ, երբեմն), հասարակ առ հասարակ (—հավասար չափով, այլև հավասարապես), սպառ ի սպառ, ի սպառ սպառ, իսպառ ի սպառ, սպառ սպառ (բոլոր նշվածները դրարարում), բոլորովիմբ (դրարարում և միջին հայերենում), հայերենի բոլոր հատվածներում՝ իսպառ, բոլորովին, դրական հայերենի երկու հատվածներում՝ ամբողջովին, լիովին, կիսովին, ամբողջապես, լիապես, մասամբ. դրարարում ի մասնէ՝ 1) մի քիչ, 2) մասնավորապես (ԱԲ, էջ 541) և այլ մակրայններ։

Մակրայնների ընդհանուր իմաստից էլ բխում է այն, որ բոլորովին, ամբողջովին մակրայններին պրոֆ. Աղաջանը վերագրում է միայն չափի իմաստ¹, մինչդեռ դրանք ունեն նաև ձևի իմաստ։

Բայի ժխտական ձևի մոտ բոլորովին մակրայն ունի նաև բնավ, ամենևնի ժխտական եղանակավորող բառերի իմաստ։ Չափի և ձևի իմաստ ունի

¹ Տե՛ս «Լեզվաբանության ներածություն», Երևան, 1952, էջ 364։

նաև հանձնում մակրայնը: «Հակոբ աղան հանձնում կը սիրեր իր զավակն» (Զն, էջ 274): «...Միևնույն խոսքերը... հանձնում կրկնվելով ավելի քաղցր կը թվեին» (նտ., էջ 72) և այլն:

7. ՉԱՓԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՄԱՍՏԻ ՄԱԿՐԱՅՆԵՐ

Կան մակրայններ էլ, որոնք ըստ կիրառության ունեն չափի և ժամանակի իմաստային երանգներ. այդպիսի մակրայններից են՝ մի անգամ (ևս), շատ անգամ, երկու անգամ, երեք անգամ և այլն: Մի անգամ մակրայնը ընդհանուր է գրական հայերենի երկու հատվածներում, այլև բարբառներում՝ Պոլիս, Առտիալ և այլն, կա նաև մեկ անգամ||անգամ մը ձևով. Ազուլիսի բարբառում՝ մոյն անգամ և այլն: Չափի իմաստով. «Ես այլ ևս աստեղծ եմ, որ ի տարուջ հագիւ մի անգամ հասանեն ի նոյն տեղի» (Եզնիկ, 2, ԻԵ, էջ 130): «...Յաւուրն միանգամ ճաշակէր ընդ երեկս սակաւ ինչ կերակուր» (ԿԳՊ, էջ 262): «Սմբատը մի անգամ ևս ստուգեց հոր ստորագրութիւնը» (ՇԵԼԺ, էջ 69): «...Ի՞նչպէս կարելի է ձանձրանալ մի բանից, որը միայն մի անգամ է տրվում մարդուս» (Ն.—Դ.—, էջ 65): Միջին հայերենում և արևմտյան գրականում հեղ մի և հեղ մը համապատասխան մակրայններն էլ նույն իմաստն ունեն. «...Եւ հեղ մի Լփէ» (ՄՁՄ, էջ 45): «Հեղ մը հագաց» (ԵՆ, էջ 33): Ժամանակի իմաստով՝ «Մի անգամ, անցյալ մայիսի դիշերը, հանկարծ սկսեց անձրև գալ» (Ն.—Դ.—, էջ 27): «Ի՞նչ մի անգամ առան տարան Հաշվապահի ուսումնարան» (ՀԹ, էջ 214): «...Ինձ կհասնէս»,—մի անգամ ասաց նա Ղորանի մասին մտածելիս» (ԳՄԹ, էջ 135) և այլն:

Չափի և ժամանակի իմաստային առումներ ունի նաև շատ անգամ մակրայնը գրական հայերենի երկու հատվածներում. միջին հայերենում ավելի հաճախ՝ շատ հեղ, վերջին ձևով կա նաև բարբառներում, արևմտյան գրական հայերենում: Չափի իմաստով՝ «...Եւ աւագան արա շատ հեղ» (ԱԲԺ, էջ 375): «Եւ օձեւ գլուխն շատ անգամ» (նտ., էջ 106): «Ահա ստանի մեջ մեր ճանապարհորդության միջոցին... շատ անգամ պատահեցավ մեզ տեսանել... հայկական եկեղեցիք» (ՄՆԵԼԺ, էջ 26—27): «Անուշը շատ անգամ էր տեսել նրան մի երիտասարդի հետ՝ ավելի քան ընթուշ խոսելիս» (ՇԵԼԺ, էջ 123): «Շատ հեղ պացի իր մոտը նստելու...» (Զն, էջ 60) և այլն: Ժամանակի իմաստով՝ «Շատ անգամ ինքը ազդը զգում է բոնություն ծանրությունը» (ՄՆԵԼԺ, էջ 54): «Շատ, շատ անգամ բերող հողին Ինքն է էրվում նըրա մեջ» (ՀԹ, էջ 105): «...Դեմքնը շատ անգամ կը խոսին... լեզուն շատ անգամ անոնց դեմքին վրա է» (ՀՊՄՄ, էջ 139—140): «Գիշերները ծովուն վրա կանցուներ շատ անգամ» (ԵՆ, էջ 166—167): «...Առանց ամբողջապէս լեցնելու կը դառնա շատ հեղ» (Զն, էջ 6) և այլն:

Երկու անգամ մակրայնը ևս հանդիպում է չափի և ժամանակի իմաստներով. այսպես՝ «Իր ձին հեծավ երկու անգամ» (ՀԹ, էջ 253): «Երկու անգամ քրէց Հալար...» (նտ.): Առաջին նախադասության մեջ երկու անգամ մակրայնը ունի չափի իմաստ. ձին հեծնում է ոչ թե առաջին, այլ երկրորդ անգամ, մինչդեռ երկրորդ նախադասության մեջ ձին Հալար է քշում ոչ թե երկու անգամ, այլ առաջին անգամ, սակայն՝ երկրորդ դեպքում, այս դեպքում, մյուս անգամ. պարզ է, որ ունի ժամանակի իմաստ:

Կտրծում ենք, որ հիշյալ մակրայնների իմաստային տարբերությունը պայմանավորված է տրամաբանական շեշտով. եթե այդ ընկնում է առաջին բաղա-

դրիչների վրա՝ մի, չափ, երկրորդ, այդ դեպքում՝ զրանք հանդես են գալիս էոնկրետ իմաստով, և կապակցություն մեջ իշխում է չափի իմաստը, իսկ եթե շեշտը վերաբերում է ամբողջ կապակցության, այսինքն՝ կապակցության վերջին բաղադրիչին, այդ դեպքում ունենում է ժամանակի իմաստ։

Մակրայր ժամանակի իմաստ ունենալիս անգամ բառը ունենում է հայհական, տրական, ներդրական հոլովների իմաստ, որը երբեմն զրոյան մեջ էլ է արտահայտվում. հոլովված ձևով է զրվում մեծ մասամբ արևմտյան գրականում, իսկ բարբառներում երբեմն հոլովված են հանդես գալիս առաջին բաղադրիչները. այսպես՝ «...Ճատ անգամներ ներկա գտնված էր հուզարկավորությանը» (ԵՆ, էջ 90)։ «Հինգերորդ անգամուն...» (Նտ., էջ 176)։ Ն. Նախիջևանի բարբառում՝ «Չախուն քր հանի՞ս, չէնէ չէ, ասաց Լրկուսում տապրան...» (Սատ. Մատ., էջ 24)։ «Երկում տապրան Արևի-Մանուկին մարը կէլլէ ու կասէ» (Նտ., էջ 45—46) և այլն։

8. ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՁԵՎԻ ՀԵՉՆԱՆՈՒՐ ԻՄԱՍՏԻ ՄԱԿՐԱՅՆԵՐ

Ժամանակի և ձևի բնդհանուր իմաստի մակրայներից են՝ ետ բնդ ետ, իսկ և իսկ, վաղվադակի, նոյնեւտայն, այս մակրայը հանդիպում է նաև բարբառներում՝ հետեւեւուն իսեւեւեւուն՝ վան, հետեւեւեւոր՝ Համշեն, հետը հետին՝ Շուրավերի խոսվածք. «Ես եկայ, հետը հետին նա էլ եկավ» (ԱՃՉԳԲ, էջ 656)։ Իսկույն մակրայը բարբառներում մեծ մասամբ փոխարինվում է թուրքերեն, արաբերեն և ռուսերեն տարրերով՝ հեմլն, հեմլնդլ, ալբեալաֆր ավրեր, ինմեալալ, հեմլդլննո, սչաս ժլ և այլն. իսկույն ձևով հանդիպում է Աղուխի բարբառում. «...Տահալա անդին քարաքա, իսկույն ձննչահալա» (Սատ. ԿՕԱ, էջ 31) և այլն։

Հիշյալ մակրայները «նույն ժամանակ, շուտով» իմաստով (վերջինը ժամանակի երանդով) ժամանակի մակրայներ են, իսկ «հանկարծ, փութով, փութանակի» ձևի մակրայների իմաստային երանդով՝ ձևի մակրայներ. տակաւ մակրայը ունի 1) դեռ, 2) կապակց կամաց իմաստները. վերջին իմաստով ձևի մակրայ է. այս մակրայը հանդիպում է նաև արևմտյան գրականում՝ «Բր անփութությունըր տակալ կը փճացներ հորմեն մնացած հարստությունը» (ԶՆ, էջ 242). հաւ մակրայը, որը բնդհանուր է բոլոր հատվածների համար, միշտ իմաստով ժամանակի մակրայ է, իսկ անդադար, անգույ, անընդհատ իմաստային երանդով՝ ձևի մակրայ. նույնպիսի բնդհանուր իմաստ ունեն նաև հետեւյալ մակրայները՝ ի բնն՝ զրարարում նաև՝ ի բնմլ, ի բնուտ, ի բնոջլ, ի ձևե, մեջրնդմեջ, միջին հայերենում նաև՝ մեջրյմեջ, բարբառներում՝ Կարին, Պոլիս, Ն. Նախիջևան և այլն՝ մեջմեջ և այլն։

Երական հայերենի երկու հատվածներում ժամանակի և ձևի բնդհանուր իմաստ ունեն նաև այլ մակրայներ՝ նորից նոր՝ արևմտյան գրականում՝ նորե նորե ի նորե՝ «Նոր ի նոր կը հաղնվեր» (ԵՆ, էջ 186), անմիջապես, վերջապես, վերջիվերջո. վերջինները ձևի են հաղիվ, հաղիվ հաղ իմաստներով. վերջապես մակրայը հաղվադեպորեն հանդիպում է նաև բարբառներում, օրինակ՝ Աղուխի բարբառում (տե՛ս Սատ. ԿՕԱ, էջ 33, ՍԱԲ, էջ 64). վերջիվերջո մակրայի դիմաց բարբառներում ունենք՝ լեար հետը՝ Ղարարադ, իտին դրին, լետին դրին՝ վան, լետկր լետկր՝ Լտֆր Լտֆր, վերջը վերջը՝ Պոլիս, Ն. Նախի-

ջևան (Пат. Мат., էջ 3, 104). վերջին ձևով կա նաև արեմտյան գրականում՝ «...վերջը վերջը սիրող մը գտեր էր» (Զն, էջ 245) և այլն:

Մակայն բարբառներում մեծ տեղ են գրավում այս մակրայնի թուրքերեն տարբերակները խիւլասա || վեր հասը || վելասը || վարհասը || զեհգանգէջ || ախքրա || ախրի || սոնսոնա || սոնսոնդա || ենջամը || քաքարի և այլն:

Ժամանակի և ձևի ընդհանուր իմաստ ունեն նաև շուտ, շուտով մակրայնները. դրանք «արագ, արագորեն, փութով» իմաստներով ձևի մակրայններ են, իսկ «վաղ, կարճ, մոտ ժամանակից» իմաստներով՝ ժամանակի: Օրինակ՝ «...եւ շունչն շուտ տայ և շուտ առնու» (ԱԲԺ, էջ 503)՝ իմա արագ տա, առնու: «...Շուտով հան ի բաղնիսցն զհիւանդն» (ՄՁՄ, էջ 14): «...Պատասխանեց Արիստոյոմ ազան՝ քայլերն շուտ և մեծ առնել սկսելով» (ՀՊՄՄ, էջ 8)՝ երկու լեզուով էլ արագ նշանակութեամբ: «Դու պիտի շուտով վերադառնաս Մոսկվա» (Շեկժ, էջ 66)՝ իմա՝ փութով, արագորեն: Ժամանակի իմաստով՝ «եւ թէ դողան շուտ կտրեն ի կաթնէն՝ վատուծ լինայ և աւելո» (ԱԲԺ, էջ 68): «...Կարծեմ շուտով Սիրիի մեջ ափելի շատ պիտի լինի լեհացի, քան թե Լեհաստան» (ՄՆեկժ, էջ 89): «Շուտով նրանց մեջ սկսվեց թեթև վիճարանություն» (Շեկժ, էջ 27): «Մենք շուտով վերածվեցինք թիթեղյա անոթի մեջ դարսըված սպահածոյի» (ՍՀ, 7—10—54, № 233): «...Կաշխատեմ շուտով կրկին այցելել ձեր երկիրը» (նտ., 22—10—55, № 251): Վերջին օրինակներում չի բացառվում ձևի իմաստային երանգը, ինչպես առաջիններում՝ ժամանակի իմաստային երանգը:

Ինչպես ասացինք, ընդհանրական մակրայնները համատեղում են գործողություն կատարման մի քանի հանգամանքներ՝ միաժամանակ. հետևարար և, անշուշտ, դառնում են համանուն պարագաներ՝ ընդհանրական պարագաներ:

Այս հանգամանքը չի վրիպել նաև գոկտոր Վ. Առաքելյանի ուշադրությունից: Նա փաստական հարուստ նյութի հիման վրա ուսումնասիրելով հայերենի պարագաները՝ եզրակացնում է, որ կան նաև ընդհանուր պարագաներ, որոնք «...հենց ավյալ կիրառությունը կարող են երկու կամ ավելի պարագաների սուշտոն արտահայտել»¹:

Շարադրվածից հետևում է, որ հայերենում ընդհանուր իմաստի մակրայններն ունեն մեծ կշիռ և բավականաչափ հետաքրքրական պատկեր, ուստի և բոլոր հիմքերը կան մակրայնների ընդհանրական տեսակի առանձնացման համար:

ՀԱՄԱՌԱՅՈՒՆ ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԱՆԵՐԻ ԲԱՆԿԱՆԸ²

ԱԲ.— Առձևոն բառարան հայկադնեան լեզուի, 2-րդ տպ., Վենետիկ, 1865:

ԱԲԺ.— Ամիրզովյանի Ամասիացի, Օգոստ բժշկութեան, խմբ. Ստ. Մալխասեանց, Երևան, 1940:

Ազաթ.— Ազաթանդեղյայ սլաւոնիսին Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909:

¹ Վ. Առաքելյան, Հայերենի շարադրություն, Ա մաս, Երևան, 1958, էջ 395:

² Պահպանելով լեզվաբանական գրականության մեջ ընդունված համառոտագրությունները՝ կատարել ենք որոշ հավելումներ:

- ԱՂ. ՀԲՄՆՃ.— Ա. Ղարիբջան, Հայերեն բարբառների մի նոր ճյուղ, Երևան, 1939 (Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. 11):
- ԱՄԲ.— էդ. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954:
- ԱՃՀԲ.— Հ. Աճառեան, Հայ բարբառագիտություն—Ուրուագիծ և դասաւորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով). Էմինեան աղագրական ժողովածու, հատ. Ը, Մոսկովա-Նոր-Նախիջևան, 1911:
- ԱՃՀԳԲ.— Հ. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913 (Էմինեան աղագրական ժողովածու):
- ԱՃՔԱԲ.— Հ. Աճառեան. Քննութիւն Ազուլիսի բարբառի, Երևան, 1935:
- ԱՃՔՆՋԲ.— Հ. Աճառեան, Քննութիւն Նոր-Ջուղայի բարբառի, Երևան, 1940:
- ԱՃՔՀԲ.— Հ. Աճառայան, Քննութիւն Համշենի բարբառի, Երևան, 1947:
- ԱՃՔՊԲ.— Հ. Աճառայան, Քննութիւն Պոլսահայ բարբառի, (ՊՀԳԱ, հատ. 19), Երևան, 1941:
- ԱՃՔՄԲ.— Հ. Աճառեան, Քննութիւն Մարաղայի բարբառի, Երևան, 1926:
- ԱՃԱՌԲ.— Հ. Աճառայան, Քննութիւն Առտիալի բարբառի, Երևան, 1953:
- ԱՃՔՎԲ.— Հ. Աճառայան, Քննութիւն Վանի բարբառի, Երևան, 1953:
- Բուղ.— Փաւստոս Բիւղանդ, Պատմութիւն Հայոց, 2-րդ տպ., Վենետիկ, 1889:
- ԳՍԹ.— Գ. Սևունց, Թեհրան, հատ. 1, Երևան, 1952:
- Եղնիկ.— Եղնկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914:
- ԵՆ.— Երուսան, Նովելներ, Երևան, 1946:
- ԶՆ—Գր. Զոհրապ, Նովելներ, Երևան, 1941:
- ԹԱՊ.— Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ, Կոստանդնուպօլիս, 1852:
- Խոր.— Մովսիսի Խորենացոյ պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան և Ս. Յարութիւնեան, Տիֆլիս, 1913:
- ԿԳՊ.— Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909:
- ՀԹ.— Հովհաննէս Թումանյան, Ընտիր երկեր, Երևան, 1953:
- ՀՄԿԲ.— Հակոբ Մկրտչյան, Կաջնո բարբառը, Երևան, 1952:
- ՀՊՄՄ.— Հակոբ Պարոնյան, Մեծապատիւ մուրացկանները, Երևան, 1934:
- Ղևոնդ.— Պատմութիւն Ղևոնդեայ Մեծ վարդապետի հայոց, 2-րդ տպ., Ս. Պետերբուրգ, 1887:
- ՄՀԱԳ.— Մ. Մկրչյան, XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, Երևան, 1938:
- ՍՆԵԼԺ.— Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, Երևան, 1940:
- ՄՀԲԲ.— Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան:
- Մուր. Գ.—Մ.— Մուրացան, Գեորգ Մարգարէտունի, Երևան, 1939:
- ՄՋՄ.— Մխիթարայ Բժշկապետի Հերացոյ Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832:
- Ն.—Գ.—Նար-Դոս, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 6, Երևան, 1946:
- ՆԲՀ.— Նոր բառգիրք հայկադեան լեզուի, Վենետիկ, 1836—1837:
- ՇԵԼԺ.— Շիրվանդադե, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, Երևան 1950:
- ՊՀԳԱ.— Երևանի Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ»:
- Пат. Мат.— Материалы для изучения армянских наречий, вып. I, Говор нахичеванский, изд. К. Патканов, СПб, 1875.

Пат. ИСОД — Патканов, Исследование о диалектах армянского языка, СПб, 1869.

ՍԱԲ. — Սարգիս Սարգսեանց, Ազգուկոց բարբառը (Զօկերի լեզուն), Լեզուա-
բանական հետազոտութիւն, Մոսկովա, 1883:

ՍԷ. — Սովետական Հայաստան (օրաթերթ):

ՎԲՊՏ. — Վարդան ՄԷԺ, Պատմութիւն տիեզերական, Մոսկովա, 1861:

ՎՏԲ. — Վահան Տերչյան, Բանաստեղծությունների լիակատար ժողովածու,
Երևան, 1940:

ՖՐԻ. — Ֆրիկ, Բանաստեղծություններ, կազմեցին Մ. Մկրչյան և Ե. Թորոս-
յան, Երևան, 1941:

НАРЕЧИЯ ОБЩЕГО ЗНАЧЕНИЯ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

А. Н. КЮРКЧЯН

(Р е з ю м е)

Наречия общего значения имеют свойство выражать одновременно несколько грамматических значений. Некоторые из них выражают то или иное грамматическое значение в зависимости от их применения, иные же имеют несколько грамматических значений, независимо от их применения. Наречия общего значения сгруппированы в соответствии с тем, сколько грамматических значений они выражают и какие обстоятельства действия показывают. Таковы имеющие общее значение наречия: а) места и времени (*առտ, անդ, վերուստ, լստոյ, յառաջ...* и другие наречия в грабаре и соответствующие им на других этапах развития армянского языка), б) места и образа действия (*ներքուստ, արտաքուստ, երեսանց, տակահան* || — *հանց* и т. д.) в) места, времени и образа действия (*առտէն, անդէն, հուպընդհուպ, տեղնուտեղր* и т. д.), г) места, времени, образа действия и меры (*անդրէն*), д) времени, образа действия и меры (*դարձյալ, վերստին, կրկին, նորից* || *նորեն, էլի* и т. д.), е) меры и образа действия (*սակավ առ սակավ, փոքր առ փոքր, բոլորովին, ամբողջովին, լիովին, իսպառ* и т. д.), ж) времени и меры (*մի անգամ, շատ անգամ, երկրորդ անգամ...* и т. д.), з) времени и образа действия (*կտրնդետ, վաղվաղակի, նոյնհետալն, իսկուցն, վերջիվերջո* и т. д.).

Историческое исследование наречий общего значения показывает, что этот вид постоянно пополняется путем исторического взаимоперехода отдельных наречий других типов, большей частью за счет семантического изменения наречия места. Но, независимо от этого, этот тип наречия на всех этапах армянского языка имеет большой вес и выступает в качестве особого разряда.